

Սակայն պիտի փափաքէի որ բնագրին տպագրութիւններէն մէկուն զրկուէր միշտ մեր ժամանակին ինչայեւու համար, եթէ Թարգմանութեան հետ ըլլուելիք բազմատութիւնը երազութեան կարօտ է։ Անոնք օրինակ իմն Եւագրի ճառերէն մէկը, Ս. Ղազարու տպագրութեան 63 էջէն, և համեմատենք Միննի հրատարակութեան հետ, ուր ըստած է թէ Նեղոս է հեղինակը (էջ 1096). կը տեսնենք որ Դ զուիւր (էջ 1097) հայերէնին մէջ կը սկսի էջ 68, 12. Ե.ժ (էջ 1100), 70, 3 էջէն. Զ.ժ՝ 71, 1 էջէն. Է.ժ՝ 72, 10 էջէն. Ը.ժ՝ 73, 18 էջ. Թ.ժ՝ 74, 26 էջ և այսպէս հետզհետէ մինչև ԻԱ (էջ 1120) որ Թարգմանութեան մէջ 92 էջին վերջը կը գտնուի։

Աւելի խառնակ են ուրիշ համեմատութիւնք. Հայերէնը 22 էջին թէջ կը տեսնուի, իսկ յունարէնը պէտք է փնտռել Հին Հարց Մատենադարանին Ի. հտ. 553 էջին մէջ. առաջ կ'երթըցուի մինչև հայերէնին 27, 8 էջը (= յուն. 554, 35). բայց յետոյ 27, 9 էջին կը համապատասխանեն յունին 575, 1 — 576, և ուստով մը ետ պէտք է դառնալ, այնպէս որ հայ. 31, 1 = յուն. 554, 36. և հայ. 50, 1 = յուն. 557B. և հայ 41, 9 = յուն. 563E, և հայ. 45, 2 = յուն. 557 XXXV: Ստոյգ է որ ամէն մարդ կրնայ ինքնիրեն լուսանցքին մէջ այս ընթերցողներն ընել, բայց ով որ զմեզ ճոխ ճաշի մը կը հրաւրէսկ էտք էր որ պտուղէն զրկէր։

Կ'ըսէի թիչ առաջ թէ ձեռագիրներէն առաջին անգամ հայերէնին հարազատ ընթերցուածը հանելը դիրին գործ էր և թէ փոխաբերութիւններով կնճռոտած ըլլալուն յարատե ուշադրութիւն կը պահանջէր տպագրիչէն, շատ անգամ ինքն իր հաւատքն ալ կորսնցնելու պատճառ ըլլալով։ Բարեկամիս կարճառօտ խօսքերուն այս փորձիկ յաւելուածս փակելէն առաջ, Եւագրի պատիկ զուխներէն մէկուն Թարգմանութիւնը պիտի տամ, բառացի Թարգմանելով հայերէնէն, կարելի եղածին չափ, և ուզածէս աւելի՛ թէ որ պար-

զութեան ու վսեմութեան միայն նայիմ, կը մտածեմ ու կը Թարգմանեմ. կ'ուզէի որ կարդացուած ատեն մտածուէր. անշուշտ ատանց հաճոյք մը զգալուս և զգալ տալուս։

Եւ կը քարգմանէ գրքին 92 էջին վերջերս տողէն սկսեալ մինչև 94 էջ տասնըրորորդ տող։ Յունարէնին մէջ այս երկու կտորները մէկ գրութիւն կը կազմեն, որ է ԻԱ (Միննի Հայրախ. 96. ՀԹ, էջ 1120-1121)։

Հոս կանգ կ'առնում սակաւ ընթերցողներու առջև, սակայն կը դառնամ վաստակաւից հաճոյքով կտրիճ Մխիթարեանին լուրջ գրքին՝ որ բարի պտուղ պիտի տայ, սնուցանելու չափ քննադատենք ուսումնասիրութիւնները և անոնց միտքը։ Այսպիսի պատուաւոր հիւրեր կը վայելէ իմ Վենետիկս ալ։

Հ. Բ. ԶՐԱՔԱՆ

## « ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶԻ »

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻՒՐ տարին 3 ր. արտասահ. տ. 5 ր. ՏԱՐԱԶ » 6 ր. » 10 ր. ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ պրիմիաներով Գեղարքունիքի, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՎ տ. 10 ր. արտասահման 18 ր.։

Պրէմիաներն են՝ 1. ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐ-ԼԵԱՆԻ 18 գոյնով մեծադիր փառահեղ պատկերը, 2. ԱՂԲԻՒՐԻ ԱՎՈՒՆՔԸ (աշխատակցների պատկերները), 3. ԳԵՂԱՓԸՆՋԻԿ, 4. ԱՌՈՂՋԱՊԱՀ։

Հասցէն՝ Rédaction «Aghbur-Taraz»  
TIFLIS (Caucase)

ԱՎԵՏԱՔԵՐ Շարարարերը, կրօնական, ուսումնական, ընտանեկան և քաղաքական. տարեկան բաժնեգին 40 դր.։

Դիմել The Weekly «Avedaper»,  
American Bible House

CONSTANTINOPLE